## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՕՁՈՒՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
## ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

*Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, 1731, փողոց 6, շենք 10,*
*Հեռ. (0253) 6-16-62, Վեբ-կայք: http://www.odzun.am, Skype: odzun.lori, Էլ. փոստ: odzun.lori@mta.gov.am*

***թիվ 45-16***
***08 փետրվարի, 2016թ.***

*ՀՀ Լոռու մարզպետ*
*Պարոն Ա. Նալբանդյանին*

Ձեզ ենք ներկայացնում Օձուն գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի փետրվարի 4-ի N 1-ից N 6 որոշումները:

Առդիր՝ 13 թերթ:

*Հարգանքով՝*
***Օձուն համայնքի ղեկավար*** ***Ա. Տիտանյան***

Կատարող՝ Վ. Զավարյան
հեռ. 0253-6-16-62

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**04 փետրվարի 2016 թվական, N 01-Ա**

## ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի ԱՌԱՋԻՆ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ, 12¹-րդ և 14-րդ հոդվածների՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Օձուն գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 4-ի առաջին արտահերթ նիստի օրակարգը.

1) ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

2) ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N 49-Ա, 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N 50-Ա, 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 61-Ա ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 55-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ.

4) ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԻ ՀԱՐԿ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ 13793409 ՀՎՀՀ-ՈՎ ՀԱՐԿԱՏՈՒԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀՈՂԵՐՈՒՄ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Կողմ (9) | Դեմ ( չկա ) | Ձեռնպահ ( չկա ) |
|---|---|---|
| Ա. ԱՂԻԿՅԱՆ | | |
| Ս. ԱՍՐՅԱՆ | | |
| Ա. ԲԵԺԱՆՅԱՆ | | |
| Դ. ԴԱՎԹՅԱՆ | | |
| Ս. ԴԱՎԹՅԱՆ | | |
| Գ. ԹՈՐՈՍՅԱՆ | | |
| Ա. ՁԱՎԱՐՅԱՆ | | |
| Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | | |
| Ս. ՏԻՍԱՆՅԱՆ | | |

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՍԱՆՅԱՆ**

2016թ., փետրվարի 4
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**04 փետրվարի 2016 թվական, N 02-Ա**

## ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն ‹‹Տեղական ինքնակառավարման մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի առաջին կետի, 69-րդ հոդվածի երրորդ և յոթերորդ պարբերությունների, ‹‹Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի երկրորդ մասի՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Օձուն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Օձուն գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ (9) | Դեմ ( չկա ) | Ձեռնպահ ( չկա ) |
|---|---|---|
| Ա. ԱՂԻԿՅԱՆ | | |
| Ս. ԱՍՐՅԱՆ | | |
| Ա. ԲԵԺԱՆՅԱՆ | | |
| Դ. ԴԱՎԹՅԱՆ | | |
| Ս. ԴԱՎԹՅԱՆ | | |
| Գ. ԹՈՐՈՍՅԱՆ | | |
| Ա. ՁԱՎԱՐՅԱՆ | | |
| Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | | |
| Ս. ՏԻՏԱՆՅԱՆ | | |

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2016թ., փետրվարի 4
Գ. Օձուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**04 փետրվարի 2016 թվական, N 03-Ա**

## ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N 49-Ա, 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N 50-Ա, 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 61-Ա ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 55-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի առաջին կետի՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1.Կատարել փոփոխություններ Օձուն համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 11-ի ,,ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ, ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ, ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԾՐԱԳՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 49-Ա որոշման մեջ.

որոշման առաջին մասի երրորդ կետում. «ՎԱՐՈՒԺԱՆ ՏԻՏԱՆՅԱՆ աշխատակազմի քարտուղար» բառերը փոխարինել «Հարություն Գալստյան Օձուն համայնքի ղեկավարի խորհրդական» բառերով (հանձնաժողովի անդամ Վարուժան Սարգսի Տիտանյանի փոխարեն հանձնաժողովի նոր անդամ նշանակել համայնքի ղեկավարի խորհրդական Հարություն Հովհաննեսի Գալստյանին):

2.Կատարել փոփոխություններ Օձուն համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 11-ի ,,ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 50-Ա որոշման մեջ.

որոշման առաջին մասի երրորդ կետում. «ՎԱՐՈՒԺԱՆ ՏԻՏԱՆՅԱՆ աշխատակազմի քարտուղար» բառերը փոխարինել «Հարություն Գալստյան Օձուն համայնքի ղեկավարի խորհրդական» բառերով (հանձնաժողովի անդամ Վարուժան Սարգսի Տիտանյանի փոխարեն հանձնաժողովի նոր անդամ նշանակել համայնքի ղեկավարի խորհրդական Հարություն Հովհաննեսի Գալստյանին):

3.Կատարել փոփոխություններ Օձուն համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ,,ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 61-Ա որոշման մեջ.

որոշման առաջին մասի երկրորդ կետում. «ՎԱՐՈՒԺԱՆ ՏԻՏԱՆՅԱՆ աշխատակազմի քարտուղար» բառերը փոխարինել «Հարություն Գալստյան Օձուն համայնքի ղեկավարի խորհրդական» բառերով (հանձնաժողովի անդամ Վարուժան Սարգսի Տիտանյանի փոխարեն հանձնաժողովի նոր անդամ նշանակել համայնքի ղեկավարի խորհրդական Հարություն Հովհաննեսի Գալստյանին):

4.Կատարել փոփոխություններ Օձուն համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 30-ի ‹‹ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-112-0460-0031 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ›› N 55-Ա որոշման մեջ.

որոշման առաջին կետի առաջին պարբերության մեջ «բենզալցակայան» բառերը փոխարինել «հասարակական նշանակության՝ բնակչության սոցիալական սպասարկման, ինչպես նաև վարչական ու հասարակական կազմակերպությունների տեղակայման համար նախատեսված շինությունների նպատակային նշանակության, առևտրի, հասարակական սննդի և կենցաղ սպասարկման համար նախատեսված շինության՝ ավտո-տեխ. սպասարկման կայան» բառերով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Կողմ (9) | Դեմ ( չկա ) | Ձեռնպահ ( չկա ) |
|---|---|---|
| Ա. ԱՂԻԿՅԱՆ | | |
| Ս. ԱՍՐՅԱՆ | | |
| Ա. ԲԵԺԱՆՅԱՆ | | |
| Դ. ԴԱՎԹՅԱՆ | | |
| Ս. ԴԱՎԹՅԱՆ | | |
| Գ. ԹՈՐՈՍՅԱՆ | | |
| Ա. ՁԱՎԱՐՅԱՆ | | |
| Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | | |
| Ս. ՏԻՏԱՆՅԱՆ | | |

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

2016թ., փետրվարի 4
Գ. Օձուն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**04 փետրվարի 2016 թվական, N 04-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի վեցերորդ պարբերության, 16-րդ հոդվածի չորրորդ և 23-րդ կետերի՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի ոռոգման համակարգերի կառուցման և վերանորոգման ներդրումային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Կողմ (9)** **Դեմ ( չկա )** **Ձեռնպահ ( չկա )**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ԶԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2016թ., փետրվարի 4**
**Գ. Օձուն**

# << Լոռու մարզի ՕՁՈՒՆ համայնքի ոռոգման համակարգի կառուցման/վերանորոգման ներդրումային ծրագրի հարցաշար

| 1. Ընդհանուր տվյալներ | |
|---|---|
| Մարզ | Լոռի |
| Համայնք | Օձուն |
| Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝ | 5321 |
| գրանցված | 5087 |
| միջին փաստացի | 4842 |
| Համայնքի ընտանիքների թիվը, այդ թվում՝ | 1369 |
| գրանցված | 1200 |
| միջին փաստացի | 1230 |
| Համակարգի ուղղակի շահառուներ | 2500 |
| Մինչ ծրագրի իրականացումը, մարդ | 2000 |
| Ծրագրի իրականացումից հետո, մարդ | 2500 |
| Մինչ ծրագրի իրականացումը, տն. տնտեսութ. | 650 |
| Ծրագրի իրականացումից հետո, տն. տնտեսութ. | 1000 |

| 4. Համայնքի հողատեսքերը | հա |
|---|---|
| Ընդհանուր հողատարածքը | **7879.72** |
| Գյուղ. նշանակության հողեր | 5404.54 |
| Վարելահողեր | 1295.84 |
| Բազմամյա տնկարկներ | 10.0 |
| այդ թվում՝ պտղատուայգիներ | 10.0 |
| խաղողիայգիներ | |
| Տնամերձներ | 276.90 |
| Խոտհարքեր | 339.03 |
| Արոտներ | 3012.20 |
| ... | |
| ... | |
| ... | |
| ... | |
| Ոռոգելի հողատարածքներ | **1151** |
| **Փաստացի ոռոգվող** | **200** |
| լիարժեք ոռոգվող | ------ |
| ոչ լիարժեք ոռոգվող | 200 |
| Չոռոգվող հողատարածքներ | **751** |
| Ներդրումային տարածքիհողատեսքերի ներկայիս շուկայական արժեքը, դրամ | 1.5-2 մլն դրամ |

| 2. Համայնքի անասնագլխաքանակը | |
|---|---|
| Ընդամենըանասնագլխաքանակ | 10012 |
| Խոշորեղջերավորանասուններ | 2172 |
| կովեր | 969 |
| Մանրեղջերավորանասուններ | 334 |
| խոզեր | 786 |
| Թռչուններ | 5271 |
| Մեղվաընտանիքներ | 480 |

| 3. Անասնապահական միջին համախառն արտադրանք | |
|---|---|
| Միս, ց | 33000 |
| Կաթ,լ | 10460 |
| Ձու, հատ | 5643000 |
| Մեղր, լ | 552 |

RAED PIU

| 4.1 Վերակառուցվող ոռոգման ցանցի տակ ընկած հողատեսքերը | |
|---|---|
| Ոռոգելի հողատարածքներ | 1151 |
| Փաստացի ոռոգվող | 200 |
| լիարժեք ոռոգվող | ----- |
| ոչ լիարժեք ոռոգվող | 200 |
| Չոռոգվող հողատարածքներ | 751 |

5. Առաջարկվող ոռոգման ցանցի տակ ընկած տարածքը, հիմնական մշակաբույսերի կազմը և բերքատվությունը

| Անվանումը | Առանց նախագծի իրականացման | | Նախագծի իրականացումից հետո | |
|---|---|---|---|---|
| | տարածքը, հա | միջին բերքատվությունը, ց/հա | տարածքը, հա | միջին բերքատվությունը, ց/հա |
| Պտուղ և հատապտուղ, այդ թվում՝ | 78.5 | # | 102.05 | # |
| Խնձոր | | | | |
| Ազնվամորի | 5 | 150 | 20 | 170 |
| Սալոր | 2 | 200 | 5 | 220 |
| | | | | |
| ... | | | | |
| ... | | | | |
| Խաղող | | | | |
| Բանջարանոցայինմշակաբույսեր, այդ թվում՝ | 38 | # | 49,4 | # |
| Կաղամբ | 2 | 50 | 5 | 55 |
| Պոմիդոր | 4 | 320 | 8 | 380 |
| Ճակնդեղ | 3 | 420 | 5 | 450 |
| Սխտոր | 3 | 290 | 4 | 300 |
| ... | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ... | | | | |
| ... | | | | |
| Կարտոֆիլ | 41 | 20.0 | 72 | |
| Կերային մշակաբույսեր | 275 | 2.5 | 357.5 | |
| Հացահատիկ, այդ թվում՝ | 392 | # | 450 | # |
| Ցորեն | 325 | 3.2 | 422.5 | |
| Գարի | 10 | 3,1 | 20 | |
| | | | | |
| այլ | | | | |
| Ընդամենը | 1178,5 | # | 1393,4 | # |

## 5.1 Պարզաբանումներ

Շատ մշակաբույսեր, որոնք մինչ այդ մշակվում էին առանց ոռոգման և ունեին ցածր բերքատվություն և եկամտաբերություն՝ ներդրումային ծրագրի իրականացումից հետո կփոխարինվեն ավելի եկամտաբեր կուլտուրաներով: Կզարգանա վաղեմի պտուղ-բանջարեղենի մշակումը և ունենալով տեղական պահանջարկ կսպառվի տեղում, որը կզարգացնի տեղական շուկան:

## 6. Առաջարկվող ներդրման նկարագրությունը

1. Համայնքի վարելահողերը կազմում են 1295.14 հեկտար, որոնք գրեթե ամբողջությամբ ոչ լիարժեք են ոռոգվում: Ոռոգման կարիք ունեն նաև համայնքի տնամերձ հողամասերի մի մասը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ոռոգման նոր ցանց:
2. Ներդրումների արդյունքում լրացուցիչ լիարժեք ոռոգելի կդառնա շուրջ 1350 հեկտար վարելահող:
3. Ոռոգելի դարձվող հողատարածքների սեփականության ձևը մասնավոր սեփականություն է:
4. Ներկա պահին ջրի կորուստը կազմում է մոտ 60 տոկոս: Ակնկալվում է ծրագրի իրականացումից հետո կորուստները նվազեցնել հասցնելով 10-15 տոկոսի:

### Սպասվելիք իրավիճակը (իրավիճակը ծրագրի իրականացումից հետո)

1. Անջրդի կամ ոչ լիարժեք ոռոգվող հողերում մշակվում են քիչ եկամտաբեր կուլտուրաներ, սակայն ծրագրի իրականացումը խթան կհանդիսանա դրանց կազմի փոփոխության և ավելի եկամտաբեր կուլտուրաների մշակման:
2. Միջին բերքատվության փոփոխություն ըստ մշակաբույսերի (հա)

Ցորեն – 3,1
Գարի – 3.2
Կարտոֆիլ – 20.0
Կերային մշակաբույսեր – 2.5

3. Ջրի կորուստների նվազում:

Եթե ներկայումս ջրի կորուստները կազմում են շուրջ 60%, ապա իրականացումից հետո անհամեմատ կնվազեն դառնալով 10-15%:

### 7. Հիմնական շուկան՝ լրացուցիչ արտադրանքի համար (վերամշակում, վաճառք և այլն)

Ավելացած գյուղատնտեսական ապրանքները ունեն վրացական շուկան համալրելու ինչպես նաև ԵՏՄ երկրներ արտահանվելու միտում: Արդեն ջրովի դարձած հողերում կբարձրանա բերքի որակը, որը ունի հեռանկար նաև ստեղծել պահածոների կամ այլ վերամշակող արտադրություն:

### 8. Ենթակառուցվածքի շահագործման և պահպանման պայմանավորվածությունները և դրանց ֆինանսավորման աղբյուրը

Վերականգնվող ենթակառուցվածքի կառավարումը կիրականացվի համայնքի կողմից իսկ հետագայում անհրաժեշտ կլինի ենթակառուցվածքի պահպանումն ու շահագործումն իրականացնել Լոռի Ջրանցք <<ՋՕԸ>>-ի կողմից: Ոռոգման համակարգի հետագա պահպանման և շահագործման ֆինանսական աղբյուր է կհանդիսանան համայքի միջոցները և այլ ներդրումները:

## 9. Այլ ծրագրերի հետ համահունչությունը

Համայնքում տարբեր ուղղություններով իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնցից կարող ենք առանձնացնել
2015 թվականից իրականացվող ՀԲ-ի կողմից ֆինանսավորվող Ագարակ- Օձուն-Մ6 ճանապարհի հիմնանորոգումը.
13 մլն. ՀՀ դրամի կատարվել է ոռոգման ջրագծի վերանորոգման աշխատանքներ.
ԱԶԲ-ի կողմից շուրջ 130 մլն. ՀՀ դրամի ներդրման շնորհիվ համայնքում հիմնովին փոխվել և անցկացվել է նոր ջրագիծ.
90 մլն. ՀՀ դրամի համայնքում կատարվել է ներհամայնքային փողոցների ասֆալտապատման աշխատանքներ, 21 մլն. ՀՀ դրամի համայնքում կատարվել է կոյուղագիծ, 35 մլն. ՀՀ դրամի կատարվել է տանիքների հիմնանորոգման աշխատանքներ, 45 մլն. ՀՀ դրամի կատարվում է արվեստի դպրոցի հիմնանորոգման աշխատանքներ, իրականացվել են փողոցային լուսավորության և ճանապարհի փոսալցման աշխատանքներ:

## Բնապահպանական խնդիրները և դրանց հաղթահարմանմեխանիզմները

Գյուղի մայր ջրանցքը ունի թույլտվություն Տաշիր գետից սնվելու, որը չի վնասում գետի էկոհամակարգին և չի առաջանում բնապահպանական որևէ խնդիր:
Ծրագրի իրականացումը ոչ միայն չի առաջացնում բնապահպանական խնդիրներ,այլև լուծում է շատ խնդիրներ: Օրինակ եթե հիմա շատերը հողերի միջով անց էին կացնում ակոսներ իրենց հողը ջրելու համար, ապա ծրագրի իրականացումից հետո այդ երևույթը կվերանա և չի կատարվի հողերի լվացում՝ առաջացնելով հողերի դեգրադացում:

## 10. Ուսուցումներ, դասընթացներ, վերապատրաստումներ

Համայնքում 2015 թվականին անց է կացվել սեմինար-հանդիպում Ջրային Պետական Կոմիտեի ԾԻԳ-ի նախաձեռնությամբ «Ջրից դեպի շուկա» խորագրով: Սակայն ֆերմերների շրջանում կա որոշակի դասընթացներ իրականացնելու կարիք:

## 11. Տեղեկություններ գործող առևտրային, կրթական, կուլտուր-կենցաղային, մշակութային, սպորտային օբյեկտների վերաբերյալ

Համայնքում կան շուրջ 50 առևտրի կենցաղային սպասարկման օբյեկտներ, որոնք հիմնականում վերջին 10 տարվա ընթացքում են հիմնադրվել և ունեն լավ պայմաններ:
Մշակույթի տուն, 2 ՆՈՒՀ ՀՈԱԿ, 2 գրադարան, արվեստի դպրոց, որոնք կառուցվել են 1970-1980-ականներին և գտնվում են լավ վիճակում:
Ֆուտբոլի դաշտը և սպորտդահլիճը կահավորված չեն:

Օձուն համայնքի ղեկավար Արսեն Տիտանյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**04 փետրվարի 2016 թվական, N 05-Ա**

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԻ ՀԱՐԿ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ 13793409 ՀՎՀՀ-ՈՎ ՀԱՐԿԱՏՈՒԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշման.

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1.Օձուն համայնքի հողի հարկ և գույքահարկ վճարողների հաշվառման և հողի հարկի և գույքահարկի հաշվարկման ավտոմատացված տեղեկատվական համակարգի 13793409 ՀՎՀՀ-ով հարկատուին (հասցե գ. Օձուն, փողոց 1, տուն 40, ՀՎՀՀ 13793409) ազատել հողի հարկի 2015 և 2016 թվականների ապառքներից՝ տասներկու հազար վեց հարյուր վաթսուն ( 12 660 ) ՀՀ դրամ գումարի չափով:

2. Սույն որոշման համար հիմք են հանդիսանում Օձուն համայնքի բնակիչ Պ. Հովասափյանի դիմումը և Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Կողմ (9)** **Դեմ ( չկա )** **Ձեռնպահ ( չկա )**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՄՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2016թ., փետրվարի 4**
**Գ. Օձուն**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**04 փետրվարի 2016 թվական, N 06-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀՈՂԵՐՈՒՄ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի վեցերորդ պարբերության, 16-րդ հոդվածի՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. Օձուն համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերում «ԵՐՌԱՖ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը թույլատրել իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ ՝ համաձայն հավելվածի:

2. Ուսումնասիրություն կատարելուց, օգտակար հանածոյի պաշարները սահմանված կարգով հաստատվելուց և ընդերքօգտագործման իրավունքի ձրակերպումից հետո, տալ հողի նպատակային նշանակության փոփոխման և վարձակալության պայմանագրի կնքման համար նախնական համաձայնություն՝ հողի նպատակային նշանակության փոփոխման և վարձակալության պայմանագրի կնքման համար:

3. Համայնքի վարչական տարածքում ընդգրկված հողերում երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու համար «ԵՐՌԱՖ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրինությունը պարտավորվում է սահմանված կարգով կնքել հողի վարձակալության պայմանագիր:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Կողմ (9)** **Դեմ ( չկա )** **Ձեռնպահ ( չկա )**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

**2016թ., փետրվարի 4**
**Գ. Օձուն**